

Եռյակներ 2

Տրված են n թիվը և n տարր պարունակող 3 զանգված՝ a , b և c : Ձեր խնդիրն է գտնել այնպիսի (i, j, k) եռյակների քանակը, որ տեղի ունենա հետևյալ պայմանը՝ $a[i] < b[j] < c[k]$:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է մեկ բնական n ($1 \leq n \leq 100\,000$) թիվ: Հաջորդ երեք տողերում տրված են համապատասխանաբար a , b և c զանգվածները: ($0 \leq a[i], b[i], c[i] \leq 10^9$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ պայմանին բավարարող եռյակների քանակը:

Օրինակ

Մուտք.

4

12 6 8 3

1 3 5 8

9 15 7 5

Ելք.

7